

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստի (№ 15)

4 դեկտեմբերի 2015թ.

Ժամը՝ 15⁰⁰

1. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Խաչիկ համայնքի տնամերձների ոռոգման ցանցի վերակառուցում» ծրագրի մասին:
(Արմինա Դարբինյան)
2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Իզմիրյան ԲԿ-ի համար սարքավորումների տեղադրում» ծրագրի մասին:
(Արմեն Գրիգորյան)
3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Տպարանի տանիքի վերափոխում» ծրագրի մասին:
(Արմեն Գրիգորյան)
4. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում ֆուտբոլի փոքր խաղադաշտի կառուցում» ծրագրի մասին:
(Գևորգ Պապիկյան)
5. «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ալավերդի քաղաքում նոր մանկապարտեզի շենքի կառուցում» ծրագրի մասին:
(Աշոտ Վարոյան)
6. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին» ծրագրի մասին:
(Վահե Ավագյան)
7. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Դպրոցի բակային տարածքների բարեկարգում» ծրագրի մասին:
(Վահե Ավագյան)
8. «Հայ դպրոց» հիմնադրամի կողմից իրականացվող բարեգործական ծրագրի մասին:
(Կարեն Բունիաթյան)

9. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման մասին
(Արման Բարխուդարյան)

- 9.1 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին N 1:
- 9.2 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ

առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին N 3:

- 9.3 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ս.Վ.Մալախյանի անվան ակնաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:
- 9.4 «Վերարտադրողական առողջության, պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:
- 9.5 «Վերարտադրողական առողջության, պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին N 1:
- 9.6 Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:
- 9.7 Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին N 1:
- 9.8 Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին N 2:
- 9.9 «Երուսաղեմի բժշկական Սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամ հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:
- 9.10 Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Ճարտարի քաղաքային համայնքի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:
- 9.11 «Տաշիր» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:
- 9.12 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի N Մ-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Տաշիր» բարեգործական հիմնադրամ):
- 9.13 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-133-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն):
- 9.14 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ):
- 9.15 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1283-Ա որոշմամբ

հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ) N 1:

- 9.16 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1197-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին («Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամ):
- 9.17 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հունվարի 25-ի N Մ-010-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ):
- 9.18 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի N Մ-1074-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռի մասին («ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր):
- 9.19 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռի մասին («Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր):
- 9.20 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռի մասին N 1 («Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր):
- 9.21 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» փոխության հայաստանյան մասնաճյուղ):

10. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին (Արման Բարխուդարյան)

- 10.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի N Մ-857-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստան» համահայկական հիմնադրամ):
- 10.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 22-ի N Մ-330-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Հայաստան» համահայկական հիմնադրամ):

- 10.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի N Մ-280-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Հայաստանի մանուկների հիմնադրամ):
- 10.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N Մ-1173-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին (Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ):
- 10.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 26-ի N Մ-648-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամ):
- 10.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 26-ի N Մ-1338-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Օրբան» բարեգործական հասարակական կազմակերպություն):
- 10.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի N Մ-930-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին (Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ (WWF-Armenia):
- 10.8 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 26-ի N Մ-648-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություն կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին («Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամ):
- 10.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1220-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին («Տաշիր» բարեգործական հիմնադրամ):
- 10.10 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի N Մ-1310-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին («Մայրի» հասարակական կազմակերպություն):

11. Այլ հարցեր

- 11.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի սեպտեմբերի 12-ի N Մ-834-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին (Հայկական Բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն):

- 11.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկտը երկարաձգելու մասին (Հայկական Բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն):
- 11.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մայիսի 15-ի N Մ-528-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին («Արփա լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ):
- 11.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 9-ի N Մ-912-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին («Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն):
- 11.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 28-ի N Մ-905-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Ընտանիք» բարեգործական հասարակական կազմակերպություն):

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ :**

ԼԱՍԽԱԳԻՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Նոյեմբերի 2015 թվականի N Մ - - Ա
քաղ. երևան

15/1

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱՆԱՑՎՈՂ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԽԱՅԻԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆԱՄԵՐՁՆԵՐԻ ՈՈՒԳՄԱՆ ՑԱՆՁԻ ՎԵՐԱԿԱՌՈՒԹՅՈՒՆ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի -ի N 07/80-2/-15 և նոյեմբերի -ի N 06/3-3/-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի նոյեմբերի -ի N 02/14/-15, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության 2015 թվականի նոյեմբերի -ի N 02/14/-15 ու Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2015 թվականի նոյեմբերի -ի N 01/10.1-1/-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 3,400,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Խաչիկ համայնքի տնամերձների ոռոգման ցանցի վերակառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Քրտուք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01218107) 2015 թվականի նոյեմբերի 5-ին կնքված N ՀՀ/Ն-05/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տնամերձների ոռոգման ցանցի վերակառուցում՝ 3,100,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Կարմիր Մանյան



Բնակավայրի 2015թ.

«Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Խաչիկ համայնքի տնամերձների ոռոգման ցանցի վերակառուցման նախագծում»

ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Կառուցել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Խաչիկ համայնքի տնամերձների ոռոգման ցանցը և մաքրել գոյություն ունեցող ջրամբարը
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը	Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Խաչիկ համայնք, ջրամատակարարման բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 3,400,000,00 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Խաչիկ գյուղի համայնքը
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2015թ նոյեմբերի 05

	-ից մինչև 2016թ. ապրիլի 05-ը:	
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2015թ. նոյեմբերի 05 -ից մինչև 2015թ. փետրվարի 05-ը նախագծման աշխատանքների կատարում՝ 3.100.000,00 դրամ արժողությամբ, 2015 թ. փետրվարի 05-ից մինչև ապրիլի 05-ը նախագծի փորձաքննության իրականացում՝ 300.000,00 դրամ մոտավոր արժեքով:
10	Չեղք բեռվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«Ջրուտեք» ՍՊԸ-ի կողմից Վայոց Ձորի մարզի հաչիկ համայնքի տնամերձների ոռոգման ցանցի կառուցման և գոյություն ունեցող ջրամբարի մաքրման նախագծում՝ 3.100.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի Նախատեսվում է նաև նախագծի փորձաքննություն՝ 300.000,00 դրամ մոտավոր արժեքով:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Վայոց Ձորի մարզպետարանի հետ
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերաիմուղության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողություն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամիսի հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական՝ Արմինա Դարբինյանը



0010, Երևան, Մեփր-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱԿՈՐ ԳԱՆՁԱԴԵՏ

12.11.15 № 0480-2P
Ձեր № 34948-15

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 10.11.2015թ. N 15/15.1/19148-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի հաչիկ համայնքի տնամերձների ոռոգման ցանցի վերակառուցում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանջուլազյան/

Կատարող՝ Մ. Հարությունյան
Հեռ. 011 910 436

024/35633-15



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 11) 800077

0613-37 84 253-15
12.11.15

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

15/1

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 10.11.2015թ. N15/15.1/19148-15 գրությանը կից ներկայացված
«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի
Հանրապետության Վայոց ձորի մարզի Խաչիկ համայնքի տնամերձների ոռոգման
ցանցի վերակառուցում» Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի
վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված
իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.Միրումյան

034/35512-15



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱՆ

0078, Երևան, Հալաբյան 41*, հեռ.380-382, էլ. փոստ arsen.mkrtchyan@justice.am

13.11.15 N 02/14/14032-15

Ձեր N _____

15/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի կատարումն ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 10-ի
15/15.1/19148-15 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ «Հայաստան»
համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի
Հանրապետության Վայոց ձորի մարզի Խաչիկ համայնքի տնամերձների ոռոգման
ցանցի վերակառուցում» ծրագրի մեջ առկա է անհամապատասխանություն,
մասնավորապես՝ ծրագրի 1-ին և 10-րդ կետերում խոսքը գնում է Տավուշի մարզի
մասին, մինչդեռ ծրագրի վերնագրում և 5-րդ կետում խոսքը գնում է Վայոց ձորի
մարզի մասին: Այդ առումով ծրագրի վերոնշյալ կետերն անհրաժեշտ է հստակեցնել
և խմբագրել:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՍԵՆ ՄԿՐՏՅԱՆ

035/35687-15



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

0054, Երևան, Դավիթաշեն 4, Ա. Միկոյան փող. 109/8
0054, Ереван, Давидашен 4, ул. А. Микояна 109/8
109/8, A. Mikoyan str., Davidashen 4, Yerevan 0054
Հեռ./Тел./Tel. (+374 10) 31 77 02
Ֆաքս/Факс/Fax (+374 10) 36 34 49
Էլ. փոստ / E-mail: mcs@mes.am

15/1
N 1/32.2/16809-Ա

16.11.2015 Տթ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր՝ 10.11.2015 թվականի թիվ 15/15.1/19148-15 գրության՝ «Հայաստան»
համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Վայոց
ծորի մարզի Խաչիկ համայնքի տնամերձների ոռոգման ցանցի վերակառուցում» որոշման
նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ դիտողություններ և
առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Ա.Երիցյան

Կարգադրող՝ Ս. Խաչատրյան
Հեռ.՝ 010-51-13-49

025/35923-15



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ԶՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

15/1

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5

Հեռ. (374+1) 287401, (374+81) 2 25 22

„13“, „11“, 2015թ

N 01/06.1/6648-15

Ֆաքս (374+1) 28 18 32

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 2015թ նոյեմբերի 11-ի թիվ 1/32.1/16491-15 գրության հայտնում եմ, որ
«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի
Հանրապետության Վայոց ծորի մարզի Խաչիկ համայնքի տնամերձների ոռոգման ցանցի
վերակառուցում» որոշման նախագիծը քննարկվել է մարզպետարանում, ներկայացված
նախագիծը համարվել է բարեգործական և արժանացել հավանության:

Հարգանքով՝

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

Կատարող՝ Ն.Սարգսյան
Հեռ. /0281/2-30-50

118/35742-15

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության վայոց ձորի մարզի հայիկ համայնքի տնամերձների ոռոգման ցանցի վերակառուցում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ

Դիտորդության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
ՀՀ արդարադատության նախարարություն – 13.11.15, N 02/14/14032-15	
Ծրագրի մեջ առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ ծրագրի 1-ին և 10-րդ կետերում խոսքը գնում է Տավուշի մարզի մասին, մինչդեռ ծրագրի վերնագրում և 5-րդ կետում խոսքը գնում է վայոց ձորի մարզի մասին: Այդ առումով ծրագրի վերոնշյալ կետերն անիրազեշտ է հստակեցնել և խմբագրել	Դիտորդությունը ընդունվել է: Կցված է ծրագրի լրամշակված տարբերակը

15/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

նոյեմբերի 2015 թվականի N Մ- -Ա
քաղ. երևան

15/2

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ԿՈՐՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ԻԶՄԻՐԼՅԱՆ ԲԿ-Ի ՀԱՄԱՐ ՆՈՐ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի -ի N 07/80-2/-15 և նոյեմբերի -ի N 06/3-3/-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի նոյեմբերի -ի N 02/14/-15 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի նոյեմբերի -ի N 02/14/-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 85,276,100 դրամ արժողությամբ «Իզմիրյան ԲԿ-ի համար նոր սարքավորումների տեղադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ՝ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Այգեծոր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00815501) 2015 թվականի սեպտեմբերի 1-ին կնքված՝ N 20Ծ/015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բժշկական նոր սարքավորումների տեղադրման, ապամոնտաժված ռենտգեն ապարատի տեղափոխման համար շին.վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 85,276,100 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

ՀԱՍՏԱՏՎԱԾ է

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Վարչատնտեսական բաժնի տնօրեն

Մուշեղ եպիսկոպոս Բաբայան

«5» նոյեմբերի 2015 թ.

Իզմիրյան ԲԿ-ի համար նոր սարքավորումների տեղադրում

Ծ Ր Ա Գ Ի Ր

15/2

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Իզմիրյան ԲԿ-ի համար նոր սարքավորումների տեղադրում, ապամոնտաժված <<SIEMENS>> ՌԵՆՏԳԵՆ ապարատի տեղափոխման համար շին. վերանորոգման աշխատանքների իրականացումը:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3.	Բարեգործը (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4.	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 06800406:
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, բնագավառը՝ առողջապահություն:
6.	Ծրագրի բյուջեն	85,276,100 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ:
7.	Բարեգործություն ստացողը	Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հավատացյալ ժողովուրդը:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	01 սեպտեմբեր 2015թ. – 29 դեկտեմբեր 2015թ.:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Իզմիրյան ԲԿ-ի համար նոր սարքավորումների տեղադրում, ապամոնտաժված <<SIEMENS>> ՌԵՆՏԳԵՆ ապարատի տեղափոխման համար շին. վերանորոգման աշխատանքների իրականացումը՝ 85,276,100 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Աշխատանքները իրականացվելու է «Այգեծոր»ՍՊԸ-ի կողմից (<< ք. Երևան, Աճառյան 35/3, ՀՎՀՀ 00815501)՝ պայմանագիր կնքված 01.09.2015թ.: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 01 սեպտեմբեր 2015թ. – 29 դեկտեմբեր 2015թ.:
10.	Չեղք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Իզմիրյան ԲԿ-ի համար նոր սարքավորումների տեղադրում, ապամոնտաժված <<SIEMENS>> ՌԵՆՏԳԵՆ ապարատի տեղափոխման համար շին. վերանորոգման աշխատանքների իրականացումը՝ 85,276,100 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Երևանի քաղաքապետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

15/2

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13

ֆաքս (+ 374 10) 52 68 44

էլ. փոստ minister@moh.am

10.11.2015թ. N 26 Մ/22.2/12966-15

Ձեր N _____

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 2015 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 15/15.9/19071-15 գրության կապակցությամբ՝ ուղարկվում Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Իզմիրյան ԲԿ-ի համար նոր սարքավորումների տեղադրում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱՂՅԱՆ

(Signature)

Կատարող՝ Նաիրա Փափախյան
<< ԱՆ աշխատակազմի դեղորայքային քաղաքականության
և բժշկական տեխնոլոգիաների վարչություն
հեռախոս 52 27 21

020/ 35162-15
10.11.2015թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

15/2

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

12.11.2015 թ. № 07/80-2/34943-15

Ձեր № _____

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 09.11.2015թ. N 15/15.9/19071-15 գրության՝ կապված ՀՀ
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Մայր Աթոռ
Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Իգմիրյան Բկ-ի համար նոր սարքավորումների
տեղադրում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր
իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանցուղայան/

Կատարող՝ Մ. Հարությունյան
Հեռ. 011 910 436

034/35602-15
12.11.2015թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0078, Երևան, Հալաբյան 41*, հեռ. 380-382, էլ. փոստ arsen.mkrtchyan@justice.am

13.11.2015 թ. N 02/14/14030-15

15/2

Ձեր N _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՄԻՄՈՆ ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի կատարումն ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 9-ի
15/15.9/19071-15 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
կողմից իրականացվող «Իգմիրյան Բկ-ի համար նոր սարքավորումների
տեղադրում» ծրագրի դրույթներն անհրաժեշտ է հստակեցնել, մասնավորապես՝
ծրագրի 8-րդ կետի համաձայն ծրագրի իրականացման տևողությունը նշված է 1
սեպտեմբեր 2015թ. - 29 սեպտեմբեր 2015թ.: Այս կապակցությամբ պարզ չէ, թե
արդյոք խոսքն արդեն իսկ մեկնարկված և ընթացքի մեջ գտնվող ծրագրի մասին է,
թե ոչ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՄԵՆ ՄԿՐՏՅԱՆ

Կատարող՝ Ալլա Ստեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ.՝ (010) 380-227

035/35684-15
13.11.2015թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 11) 800077

06/3-3/35066-15
13.11.2015
15/2

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 09.11.2015թ. N15/15.9/19071-15 գրությանը կից ներկայացված «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Իզմիրյան Բկ-ի համար նոր սարքավորումների տեղադրում» ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.Միրոնյան

ԳԱՀՄ բաժին, Ն.Բծալյան
011-800-329

034/35726-15
13.11.2015

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Իզմիրյան Բկ-ի համար նոր սարքավորումների տեղադրում» ծրագրի մասին որոշման նախագիծի կազմակերպման և առաջարկությունների դիտողությունների վերաբերյալ

Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
ՀՀ արդարադատության նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ Որոշման նախագծի վերաբերյալ հայտնում են՝ որոշվել են անհրաժեշտ է հստակեցնել, մասնավորապես՝ ծրագրի 8-րդ կետի համաձայն ծրագրի իրականացման տևողությունը նշված է 1 սեպտեմբեր 2015թ. - 29 սեպտեմբեր 2015թ.: Այս կազմակերպման պարզ չէ, թե արդյոք խոսքն արդեն իսկ մեկնարկված և ընթացքի մեջ գտնվող ծրագրի մասին է, թե ոչ:	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից ներկայացված ծրագրի 8-րդ կետում ծրագրի իրականացման տևողությունը նշված է 1 սեպտեմբեր 2015թ. - 29 դեկտեմբեր 2015թ.:

15/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

նոյեմբերի 2015 թվականի N Մ- - Ա
քաղ. երևան

**ՄԱՅՐ ԱՅՈՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ ԿՈՂԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ՏՊԱՐԱՆԻ ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՓՈԽՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի -ի N 07/80-2/-15 և նոյեմբերի -ի N 06/3-3/-15 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի նոյեմբերի -ի N 02/14/-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 1,242,940 դրամ արժողությամբ «Տպարանի տանիքի վերափոխում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արտալան Ինդաստրիզ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00137948) 2015 թվականի հոկտեմբերի 12-ին կնքված՝ N 19Ծ/015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տանիքի վերափոխման աշխատանքների իրականացում՝ 1,242,940 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

Վարչատնտեսական բաժնի տնօրեն

Մուշեղ եպիսկոպոս Բաբայան

«5» նոյեմբեր 2015 թ.

Տպարանի տանիքի վերափոխում

Ծ Ր Ա Գ Ր

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տպարանի տանիքը վերափոխել, որպեսզի այնտեղ տեղադրվեն օդափոխության սարքերը:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3	Բարեգործը (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 06800406:
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, բնագավառը՝ եկեղեցաշինություն:
6	Ծրագրի բյուջեն	1,242,940 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ:
7	Բարեգործությունը ստացողը	Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հավատացյալ ժողովուրդը:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	12 հոկտեմբեր 2015թ. – 10 դեկտեմբեր 2015թ.:
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տպարանի տանիքը վերափոխել, որպեսզի այնտեղ տեղադրվեն օդափոխության սարքեր՝ 1,242,940 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Աշխատանքները իրականացվելու է «Արտալան Ինդաստրիզ»-ի կողմից (ՀՀ ք. Երևան Մ. Բաղրամյան 24բ, ՀՎՀՀ 00137948)՝ պայմանագիր կնքված 12.10.2015թ.: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 12 հոկտեմբեր 2015թ. – 10 դեկտեմբեր 2015թ.:
10	Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տպարանի տանիքը վերափոխել, որպեսզի այնտեղ տեղադրվեն օդափոխության սարքեր՝ 1,242,940 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն էջմիածնի քաղաքապետարանի հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱԴԱՐԱՆ

15/3

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

12.11.2015թ. № 07/ՅՕ-2/34889-15

Ձեր № _____

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 09.11.2015թ. N 15/15.9/19068-15 գրության՝ կապված ՀՀ
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Մայր Աթոռ
Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Տպարանի տանիքի վերափոխում» ծրագրի
մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ մեր իրավասությունների
շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանցուղազյան/

034/35556-15
12.11.2015թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

15/3

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1

06/3-4/34520-15
10.11.2015թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 09.11.2015թ. թիվ 15/15.9/19068-15 գրությանը կից ներկայացված Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից
իրականացվող «Տպարանի տանիքի վերափոխում» ծրագրի մասին» որոշման նախագծի
վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների
շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրոնյան

Ընթացակարգի բաժին, Ա. Մաթևոսյան

հեռ. 011 800 312

034/35270-15
10.11.2015թ.



15/3

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

0078, Երևան, Հայաստան 41^ա, հեռ.380-382, էլ. փոստ arsen.mkrtchyan@justice.am

13.11.2015 թ. N 02/14/14029-15

Ձեր N _____

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի կատարումն ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 9-ի 15/15.9/19068-15 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Տպարանի տանիքի վերափոխում» ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՍԵՆ ՄԿՐՏՅԱՆ

Կատարող՝ Արման Փանոսյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. (010) 380-227

035/35686-15
13.11.2015

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

___ նոյեմբերի 2015 թվականի N Մ -
քաղ. Երևան

-Ա

15/4

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ ՔԱՂԱՔՈՒՄ ՖՈՒՏԲՈԼԻ ՓՈՔՐ
ԽԱՂԱԴԱՇԵՏԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Լեոնային Ղարաքաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի -ի N-15, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի -ի N 07/80-2/-15 և նոյեմբերի -ի N 06/-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի նոյեմբերի -ի N 02/14/-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական որակել «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) իրականացվող՝ 9,266,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեոնային Ղարաքաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում ֆուտբոլի փոքր խաղադաշտի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ձեյթուն կահույքի ֆաբրիկա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00809654) 2015 թվականի նոյեմբերի 13-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Ստեփանակերտ քաղաքի Թումանյան 54 և 56 շենքերի հարակից տարածքում փոքր ֆուտբոլի խաղադաշտի կառուցման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 9,266,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեոնային Ղարաքաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է



«Հանրապետության ֆեդերացիա» իրավաբանական
«Հանրապետության ֆեդերացիա» իրավաբանական
«Հանրապետության ֆեդերացիա» իրավաբանական

«13» նոյեմբերի 2015թ.

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում ֆուտբոլի փոքր խաղաղաշարի կառուցում»

Ծ Ր Ա Ձ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի հարակից տարածքում ֆուտբոլի փոքր խաղաղաշարի կառուցում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ավելակվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտավորված վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միություն - ՈՒԵՖԱ (Շվեյցարիա, Կիոն)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ 02566915)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրը իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի Թումանյան 54 և 56 շենքերի հարակից տարածքում սպորտի բնագավառում:
6.	Ծրագրի բյուջեն	9,266,000 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության նախարարություն:

15/4

2

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2015 թվականի նոյեմբերի 13-ից մինչև 2015 թվականի դեկտեմբերի 30-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, ամիսամիջոց ֆինանսական միջոցների ծախսը	1. Լիգելապատի մետաղյա կանգնակների, փայտյա կահույքի, մետաղական տակդիրների պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում, խաղաղաշարի արհեստական խոտածածկի և մարզագույնի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 9,266,000 դրամ՝ 2015 թվականի նոյեմբերի 13-ից մինչև 2015 թվականի դեկտեմբերի 30-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) արդյունքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծախսերը և նախատեսվող զինը	- 2015 թվականի նոյեմբերի 13-ից մինչև 2015 թվականի դեկտեմբերի 30-ը «Ձեռք բերվող ֆարդիկա» ԲԸԸ հետ կնքվել է կապալի պայմանագիր արգելափակում մետաղյա կանգնակների, փայտյա կահույքի, մետաղական տակդիրների պատրաստման և տեղադրման աշխատանքների կատարման մասին և խաղաղաշարի արհեստական խոտածածկի, մարզագույնի տեղադրման աշխատանքների իրականացման մասին՝ 9,266,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կարավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության նախարարության ու Ստեփանակերտի քաղաքապետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը կիրականացվի ՈՒԵՖԱ-ի (ֆինանսական աուդիտ) և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից՝ սահմանված կարգով:



Բաժնի պետ Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում ֆուտբոլի փոքր խաղաղաշարի կառուցում

15/4



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱԴԱՐԱՆ

15/4

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

19.11.15թ. № 07/80-2/35949-15

Ձեր № _____

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 17.11.2015թ. N 15/15.6/19546-15 գրության՝ կապված ՀՀ
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի
ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող
«Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում ֆուտբոլի փոքր
խաղադաշտի կառուցում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք,
որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ
չունենք:

Հարգանքով

Արամ Զանցուրյան/

Կատարող՝ Մ. Հարությունյան
Հեռ. 011 910 436

19.11.15թ.
№ 034/36322-15



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Աղամյան 1
Հեռ. 011 800077

19.11.15թ. 15/4
№ 06/3-3/35830-15

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 17.11.2015թ. թիվ 15/15.6/19546-15 գրությանը կից ներկայացված
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա»
իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Լեոնային Ղարաբաղի
Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում ֆուտբոլի փոքր խաղադաշտի
կառուցում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային
մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում
առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Սիմոնյան

ԳՄՀՄ բաժին, Ա. Բաբունյան
հեռ. 011 800329

19.11.15թ.
№ 034/36202-15



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0078, Երևան, Հայաթյան 41^ա, հեռ.380-382, էլ. փոստ arsen.mkrtyan@justice.am

23.11.15թ. N 02/14/14461-15
Ձեր N _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի կատարումն ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 17-ի 15/15.6/19546-15 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում ֆուտբոլի փոքր խաղարկաշտի կառուցում» ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՍԵՆ ՄԿՐՏՅԱՆ

23.11.15թ.

N 035/36555-15

Կատարող՝ Ալյա Ստեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ.՝ (010) 380-227

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

___ նոյեմբերի 2015 թվականի N Մ -
քաղ. Երևան

-Ա

15/5

«ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱՆԱՑՎՈՐ
«ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔՈՒՄ ՆՈՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻ
ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի -ի N 3.1/3.8-1/-15 և N, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի նոյեմբերի -ի N 0/-15, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2015 թվականի նոյեմբերի -ի N -15, Հայաստանի Հանրապետության աշխարհաբնի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի նոյեմբերի -ի N ՎՄ/3-8/-15 և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի 2015 թվականի նոյեմբերի -ի N -15 եզրակացությունները, որոշում է:

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 495,810,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Ալավերդի քաղաքում նոր մանկապարտեզի շենքի կառուցման» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՄԱԳ-Էլեկտրոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07203241) 2015 թվականի նոյեմբերի 3-ին կնքված՝ N 4 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 120,065,820 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Տաշիր» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար:

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-

կարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարան և Ալավերդու քաղաքապետարան:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Տաշիր» բարեգործական երիմասրամի
 հուգաբարձուների խորհրդի կողմից
 (արձանագրություն թիվ 11/15)
 19 նոյեմբերի 2015թ.

Էրմասրամի տնօրէն
 Աշոտ Վարդան

«Ալավերդի քաղաքում նոր մանկապարտեզի շէնքի կառուցում» ծրագիր

1. Ծրագրի նպատակը	Ալավերդի քաղաքում նոր մանկապարտեզի շէնքի կառուցում՝ հաշվի առնելով համայնքում մանկապարտեզի ժամանակակից և հարմարավետ շէնքի անհրաժեշտությունը
2. Ծրագրի նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տույլերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3. Բարեգործը	«Տաշիր» բարեգործական երմասրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481)
4. Ծրագրի կատարողը	«Տաշիր» բարեգործական երմասրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481)
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, քաղ. Ալավերդի, սոցիալական բնագավառ:
6. Ծրագրի բյուջեն	495,810,000 դրամ
7. Բարեգործություն ստացողը	Ալավերդու քաղաքային համայնք՝ շինությունն անհատույց հանձնվելու է համայնքին:

8.	Ծրագրի իրականացման ստորաբաժինները	2015 թվականի նոյեմբերի 02-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 30-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. հողային աշխատանքների իրականացում - 5,400,000 դրամ, 2. ջնջի կառուցման և ներքին հարդարման աշխատանքներ - 458,910,000 դրամ, 3. տարածքի բարեկարգում և կառուցապատման այլ աշխատանքներ - 31,500,000 դրամ: Նշված աշխատանքների իրականացման ժամկետը սահմանված է մինչև - 30.12.2016թ.
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ավելավվում է շինարարական նյութերի, սարքավորումների, ապրանքների ներմուծման և Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռք բերման դիմաց հարկային արտոնություններ: 1. «Մազ Էլեկտրոն» ՍՊԸ-ի կողմից շինարարական աշխատանքների իրականացում - 120,065,820 դրամ, 2. հողային աշխատանքների իրականացում - 1080 խոր. մետր - 5,400,000 դրամ, 3. երկաթբետոնե հիմնակմախքի և պատերի կառուցման, հիմքի ջրամեկուսացման համար անհրաժեշտ նյութերի ձեռք բերում - 134,688,000 դրամ, որից ամրանների, ամրալարերի և այլ նյութերի ներմուծում - 36,000,000 դրամ 4. Էլեկտրոնություն, ջրամեկուսարարման համար նյութերի ձեռք բերում և կառուցման կառուցում, ջնուցման համակարգի մոնտաժում, անհանգուցյունների կառուցում և դրանց համար անհրաժեշտ նյութերի ձեռք բերում - 81,360,000 դրամ, 5. տանիքի ջրամեկուսացման համար նյութերի ձեռք բերում և կառուցման աշխատանքների իրականացում - 1,260 քառ. մետր - 27,450,000 դրամ, 6. արտաքին երեսպատման և ներքին հարդարման աշխատանքների իրականացում - գրանիտ, մարմարե, տրավերտինե, բազալտե սալիկների, ներկանյութերի և այլ նյութեր ձեռք բերում - 4,250 քառ. մետր - 30,745,000 դրամ, - հատակների, պատերի կառուցման և հարդարման համար անհրաժեշտ նյութերի ձեռք բերում - 2,700 քառ. մետր - 29,420,000 դրամ 7. դռների, պատուհանների, ապակե ֆասադի պատրաստում և տեղադրում 870 քառ.մետր - 35,570,000 դրամ, 8. տարածքի բարեկարգում, կառուցապատման այլ աշխատանքների իրականացում - 7,200 քառ. մետր - 20,111,180 դրամ, 9. նախագծային աշխատանքների իրականացում - 5,000,000 դրամ, 10. ավետարանապորտային ծախսեր - 6,000,000 դրամ:

15/5

11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Լոռու մարզպետարան, Ալավերդու բաղաբապետարան
13.	Ծրագրի արդյունավետության մեխանիզմների նկարագրությունը վերահսկողության մեխանիզմների վերաբերյալ:	Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ ելմադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև տեղեկատվություն կներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ծրագրի ընթացքի և ավարտի վերաբերյալ:

15/5



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱԴԵՏ

10/5

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

25.11.15թ. № 07/80-2/36793-15

Ձեր № _____

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի լրումն ՀՀ ֆինանսների նախարարության 13.11.2015թ. N 07/80-2/35054-15
գրության, ինչպես նաև հաշվի առնելով «Տաշիր» բարեգործական հիմնադրամի
19.11.2015թ. N 086 գրությամբ ներկայացված «Ալավերդի քաղաքում նոր մանկապարտեզի
շենքի կառուցում» ծրագրի լրամշակված տարբերակը (կցվում է), հայտնում եմ, որ ՀՀ
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Տաշիր»
բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ալավերդի քաղաքում նոր
մանկապարտեզի շենքի կառուցում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ մեր
Տեղեկացնում ենք Ձեզ, որ ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015թ.-ի հունիսի 22-ի #Մ-330-Ա որոշման հիման վրա Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված «Հիշում եմ և պահանջում» ծրագրի շրջանակներում ս.թ. նոյեմբերի 9-ին Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների տնօրինության անունից ՀՅՏ 48 գրությամբ դիմել էինք «Վ.Վ. Արտ դիզայն» ՄՊԸ-ին 366 850 ՀՀ դրամ արժողությամբ մատուցված ծառայությունների գումարը ազատել հարկումից:

Սույն գրությամբ դիմում ենք Ձեզ ՀՅՏ 48 գրության համապատասխան հատվածի դիմումը չեղյալ համար, քանի որ հարկազատման անհրաժեշտության այլևս չկա: Այն ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ս.թ. օգոստոսի 28-ի #Մ-870-Ա որոշմամբ արդեն իսկ հարկազատավել է:

Գլխավոր տնօրեն՝

11.11.2015

Ա.Մատուրյան

3083

094-35415
11 11 15

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 22-ի N Մ-330-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Հայաստան» համահայկական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ

Դիտորդության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
ՀՀ ֆինանսների նախարարություն – 16.11.15, N 07/80-2/35327-15	
Որոշման նախագծի 1-ին կետի 4-րդ ենթակետում նշված պայմանագրի համարը սխալ է նշված, Որոշման նախագծում նշված են թվով 6 գործարքներ, իսկ կից ներկայացված փաստաթղթերով ներկայացվել է թվով 7 գործարք (բացակայում է «Վ.Վ.Արտ-դիզայն» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիրը)	Առաջարկությունը ընդունվել է, կցված է նախագծի լրանչակված տարբերակը Նշված գործարքը կազմակերպության առաջարկությամբ հանվել է քննարկումից: Կցված է կազմակերպության պարզաբանումը

15/10.2

ՆԱԽԱԳԻԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
դեկտեմբերի 2015 թվականի N Մ- -Ա
քաղ. երևան

15/10.3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի -ի N 07/80-2/-15 և նոյեմբերի -ի N 06/3-3/-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է:**

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ավանգարդ Մոթորս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00076315) 2015 թվականի հոկտեմբերի 13-ին կնքված N Պ 15-27 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է երեք ավտոմեքենայի ձեռքբերում՝ 59,650,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2) «Անի Պլազա Հոլդեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01505315) 2015 թվականի հոկտեմբերի 22-ին կնքված N 25-28102015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հյուրանոցային ծառայությունների մատուցում՝ 1,209,796 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3) «Ծաղկածորի ստեղծագործական տուն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03003504) 2015 թվականի հոկտեմբերի 28-ին կնքված N 07 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ընդունել և ապաստարկել սեմինարի մասնակիցներին՝ 295,200 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

4) «Ֆարմ Թրասթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00043772) 2015 թվականի հոկտեմբերի 29-ին կնքված N 18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դեղորայքի ձեռքբերում՝ 300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

15/10.3

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

24.11.15 № 03/80-21

Ձեր № 36484-15

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 17.11.2015թ. N 15/15.1/19537-15 գրության՝ կապված ՀՀ
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի N Մ-280-Ա որոշմամբ
հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին (Հայաստանի մանուկներ
հիմնադրամ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների
շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանջուղազյան/

Կառարող՝ Ն. Կարապետյան,
հեռ. 011 910-437

034/36684-15



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Աղամյան 1
Հեռ. 011 800077

06/3-31/35826-15

19.11.15

15/10.3

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ա. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 17.11.2015թ. թիվ 15/15.1/19537-15 գրությանը կից ներկայացված
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի
27-ի N Մ-280-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին
(Հայաստանի մանուկների հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային
և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում
առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ԳՄՀՄ բաժին, Ա. Բարսեղյան
հեռ. 011 800329

034/36205-15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
նոյեմբերի 2015 թվականի N Մ- - Ա
քաղ. Երևան

15/10.4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-1173-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի -ի N 07/80-2/-15 և նոյեմբերի -ի N
06/3-3/-15 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման
հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մյասնիկյան 20, ՀՎՀՀ՝ 02565835) կնքված՝ ստորև
նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Վայրի բնության և մշակութային
արժեքների պահպանման հիմնադրամի կողմից «Կովկասյան կենսաբազմազանության
ապաստարան» ծրագրի մասին» N Մ-1173-Ա (2014 թվականի օգոստոսի 1-ի N Մ-768-Ա և 2015
թվականի հուլիսի 24-ի N Մ-827-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված
ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն.

1) «ԱսՇին Տրանս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01249476) 2015 թվականի հոկտեմբերի 20-ին
կնքված N 01/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական
տեխնիկայի վարձակալում՝ 1,170,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Շահարտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04210867) 2014 թվականի սեպտեմբերի 10-ին
կնքված N 02/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրատար
խողովակների ձեռքբերում՝ 15,596,607 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և
Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի և Սյունիքի մարզպետներին:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

15/10.4

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

16.11.15 № 0480-21

Ձեր № 35155-15

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 10.11.2015թ. N 15/15.1/19150-15 գրության՝ կապված ՀՀ
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N Մ-1173-Ա որոշմամբ
հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին (Վայրի բնության և մշակութային
արժեքների պահպանման հիմնադրամ)» որոշման նախագծի հետ, հայտնում եմ, որ մեր
իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանցուղազյան/

Կատարող՝ Ն. Կարապետյան
հեռ. 011 910-437

034/35791-15



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Վ Ա Ն

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 11) 800077

0613-3/35085-15

15.11.15

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

15/10.4

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 10.11.2015թ. N15/15.1/19150-15 գրությամբ կից ներկայացված «Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N Մ-1173-Ա որոշմամբ
հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին (Վայրի բնության և
մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ)» որոշման նախագծի
վերաբերյալ հայտնում եմ, որ որոշման նախագծի 1-ին կետի 1)-ին ենթակետի
գործարքը հիմնավորող պայմանագրի համաձայն, շինարարական տեխնիկայի
վարձատրոն հանդիսանում է «Վայրի բնության և մշակութային արժեքների
պահպանման հիմնադրամը», իսկ վարձակալը՝ «ԱսՇին Տրանս» ՍՊԸ-ն:

Ելնելով վերոգրյալից, առաջարկում եմ որոշման նախագծին կից ներկայացված
«ԱսՇին Տրանս» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրում համապատասխան ուղղումներ
կատարելուց հետո միայն ներկայացնել որպես ծրագրին հարակից գործարք:

Հարգանքով՝

Վ.Միրումյան

ԳԿՀՄ բաժին, Ն.Բեժանյան
011-800-329

034/35760-15

FPWC®

Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ

15/10.4

16 նոյեմբերի 2015թ. N AD/61

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ
«ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ
ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՆՕՐԵՆ՝ ՌՈՒԲԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՑ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ի լրումն ՀՀ Ֆինանսների նախարարության դիտողության՝ կապված իմ կողմից 06.11.2015թ.
N AD/57 գրությամբ ներկայացված պայմանագրի, Ձեզ եմ ներկայացնում փոփոխված
պայմանագիրը:


ԱՌԴԻՐ՝ 2 թերթ:

ՀԱՐԳԱՆ ԲԱԿ



Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

341



տպագրված է 100% վերամշակված թղթի վրա

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «01/15»
շինարարական տեխնիկայի վարձակալության մասին
(անձնակազմով կառավարման և տեխնիկական
շահագործման ծառայությունների մատուցմամբ)

15/10.4

ք. Երևան

«20» հոկտեմբերի 2015թ.

«Աս Շին Տրանս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արման Եղիկյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վարձատու», մի կողմից և Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը, ի դեմս տնօրեն Ռուբեն Խաչատրյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վարձակալ», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿՈՒՄ

1.1. Սույն պայմանագրով Վարձատուն վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը է հանձնում New Holland B90 մակնիշի էքսկավատորը, այսուհետև՝ «Էքսկավատոր» ու իր ուժերով ծառայություններ է մատուցում դրա կառավարման և տեխնիկական շահագործման համար:

1.2. Անձնակազմի անդամները Վարձատուի աշխատողներն են: Նրանք ենթարկվում են Վարձատուի Էքսկավատորի վարման և տեխնիկական սպասարկմանը, ինչպես նաև Վարձակալի Էքսկավատորի նպատակային շահագործմանը վերաբերող կարգադրություններին, որոնք պետք է լինեն օրինաչափ և ողջամիտ:

1.3. Էքսկավատորը Վարձատուի սեփականությունն է հանդիսանում:

1.4. Էքսկավատորի կառավարումը, տեխնիկական շահագործումը, սպասարկումը և վերանորոգումը իրականացնում է Վարձատուն: Էքսկավատորի լիցքավորումը համապատասխան վառելիքով կազմակերպում է Վարձատուն:

1.5. Սույն պայմանագրի գործողության ժամկետ է սահմանվում՝ աթ հոկտեմբերի 20-ից մինչև նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում 8-ից 10 օր, մոտավորապես 65 ժամ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒԹՅՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Վարձատուն իրավունք ունի՝

2.1.1. Վարձակալից պահանջել Էքսկավատորը օգտագործել միայն սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան,

2.1.2. Վարձակալից պահանջել ժամանակին կատարել վճարումները:

2.2. Վարձատուն պարտավոր է՝

2.2.1. Սույն պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում Էքսկավատորը պահպանել պատշաճ վիճակում, ներառյալ՝ ընթացիկ և հիմնական վերանորոգում իրականացնելը և անհրաժեշտ պահեստամասեր տրամադրելը:

2.2.2. Ապահովել Էքսկավատորի վարումը և տեխնիկական շահագործումը՝ պատշաճ, ժամանակին և ողջ ծավալով՝ սույն պայմանագրին համապատասխան,

2.2.3. Կատարել Էքսկավատորի շահագործման հետ կապված բոլոր ծախսերը:

2.3. Վարձակալն իրավունք ունի՝

2.3.1. Վարձատուից պահանջել իրեն տրամադրել Էքսկավատորը՝ դրան պատկանող փաստաթղթերի և պատկանելիքների հետ միասին,

2.3.2. Վարձատուի կողմից սույն պայմանագրի 2.2.1. ենթակետում նշված պարտավորությունը չկատարելու դեպքում անձամբ կատարել հիմնական վերանորոգումը և Վարձատուից պահանջել կատարված ծախսերի հատուցումը կամ դա հաշվարկել վարձավճարի հաշվին կամ պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցել վնասները:

2.4. Վարձակալը պարտավոր է՝

2.4.1. Վարձատուին վճարել 3-րդ կետով սահմանված վճարման ենթակա գումարը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՒԸ

3.1. Սույն պայմանագրով Էքսկավատորի վարձակալության մեկ ժամի արժեքը կազմում է 21,600 /բաժանել հազար վեց հարյուր/ 22 դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Էքսկավատորը վարձակալվում է օրը 8 /ութ/ ժամ, սկսած առավոտյան ժամը 9:00-ից մինչև 18:00-ն:

3.1.1. Վարձավճարի մեկ ժամի գինը կայուն է և Վարձատուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Վարձակալը՝ նվազեցնելու գինը:

4.1.2. Սույն գործարքն ազատվում է ԱԱՀ-ից («Ավելացված արժեքի հարկի մասին» 22 օրենքի 15-րդ հոդվածի 28-րդ կետով նախատեսված արտոնություն), եթե առկա է 22 Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի համապատասխան որոշումը:

4.3. Վարձակալը վարձակալության վճարը վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վարձատուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

15/10.4

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՄԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում 22 օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. ԱՆՀԱՐԴԱԶԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԻՆՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

5.1. Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

6. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1. Սույն պայմանագրին ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

6.2. Սույն պայմանագիրը կազմված է 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Երաժշտությունը կողմին տրվում է մեկական օրինակ:

7. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ՈՒ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՎԱՐԶԱՏՈՒ՝

«Աս Շին Տրանս» ՍՊԸ

ք.Երևան, Դավթաշեն թաղ. 32/22

ՀՎՀՀ՝ 01249476

ՀՎՀՀ՝ 220290123409000

«Ավերա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ

ՎԱՐԶԱԿԱԼ՝

Վայրի բնության և մշակութային արժեքների

պահպանման հիմնադրամ

ք.Երևան, Ֆիզկուլտուրիկների 48

ՀՎՀՀ՝ 02565835

ՀՀ՝ 21700-003-123064-001

«Էյջ Էս Բի Սի բանկ Հայաստան» ՓԲԸ



Եղիկյան

Տնօրեն:

Ռ. Խաչատրյան

Կ.Տ.

«ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N Մ-1173-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին (Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ

Դիտորդության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
ՀՀ ֆինանսների նախարարություն - 13.11.15, N 06/3-3/35085-15	
Որոշման նախագծի 1-ին կետի 1)-ին ենթակետի գործարքը հիմնվորող պայմանագրի համաձայն, շինարարական տեխնիկայի վարձատրում հանդիսանում է «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը», իսկ վարձակալը՝ «ԱռՇին Տրանս» ՍՊԸ-ն: Ելնելով վերոգրյալից, առաջարկում են որոշման նախագծին կից ներկայացված «ԱռՇին Տրանս» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրում հանապազատիան ուղղումներ կատարելուց հետո միայն ներկայացնել որպես ծրագրին հարակից գործարք	Մտաջարկությունը ընդունվել է, կցված է պայմանագրի լրամշակված տարբերակը

15/10.4

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
դեկտեմբերի 2015 թվականի N Մ- -Ա
քաղ. երևան

15/10.5

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N Մ-648-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ»
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-թյան 2015 թվականի հոկտեմբերի -ի N 07/80-2/-15 և հոկտեմբերի -ի N 06/3-3/-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02706151) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 26-ի «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարզաառողջարարական համալիրի կառուցում» ծրագրի մասին (3-րդ փուլ)» N Մ-648-Ա (2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-744-Ա, օգոստոսի 28-ի N Մ-880-Ա և հոկտեմբերի 23-ի N Մ-1135-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Կոմֆորտ Ռ և Վ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00048483) 2015 թվականի հոկտեմբերի 23-ին կնքված N 49/Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հավելվածում նշված ապրանքների ձեռքբերում՝ 1,611,130 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2) «Կոմֆորտ Ռ և Վ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00048483) 2015 թվականի հոկտեմբերի 23-ին կնքված N 50/Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հավելվածում նշված վերին ամբարձիչի ձեռքբերում՝ 4,355,298 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱԴԵՏ

15/10.5

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

17.11.15 № 04/80-24

Ձեր № 35949-15

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 12.11.2015թ. N 15/15.1/19306-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 26-ի N Մ-648-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամ)» ծրագրի մասին որոշման նախագծի հետ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանցուղայան/

034/35949-15



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 11) 800077

06/3-2/35682-15
15/10.5 18.11.15

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 12.11.2015թ. N15/15.1/19306-15 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 26-ի N Մ-648-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմինների վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.Միրոմյան

034/36089-15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
— դեկտեմբերի 2015 թվականի N Մ-
քաղ. երևան -Ա

15/10.6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N Մ-1338-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Օրրան» բարեգործական
հասարակական կազմակերպություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 17-ի N 07/80-2/35591-15 ու նոյեմբերի
18-ի N 06/3-4/35757-15 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության
կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնա-
ժողովի 2014 թվականի դեկտեմբերի 26-ի «Օրրան» օգնություն կարիքավոր ընտանիք-
ներին» ծրագրի մասին» N Մ-1338-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ
և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արմենիա» Հյուսանոցային Համալիր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02504956) 2015 թվականի
հոկտեմբերի 1-ին կնքված N 1151974 պայմանագրում նշված գործարքը, որով նախատես-
վում է ընթերցի կազմակերպում՝ 3,455,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի
հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

15/10.6

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

17.11.15թ. № 0780-2/35591

Ձեր №

«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 13.11.2015թ. N 15/15.4/19380-15 գրության՝ կապված ՀՀ
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 26-ի N Մ-1338-Ա որոշմամբ
հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Օրրան» բարեգործական
հասարակական կազմակերպություն)» որոշման նախագծի հետ հայտնում ենք, որ մեր
իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանցուղազյան/

N 034/36035-15
17.11.15թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-
քաղ. Երևան

- Ա

15/10.7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N Մ-930-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Բնության համաշխարհային
հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ (WWF-Armenia))



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

15/10.6

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1

N 06/3-4/35757-15
18.11.15թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի

համակարգման հանձնաժողովի նախագահ

պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 13.11.2015թ. թիվ 15/15.4/19380-15 գրությանը կից ներկայացված Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 26-ի N Մ-1338-Ա
որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Օրրան» բարեգործական
հասարակական կազմակերպություն)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և
մաքսային մարմինների վերապահված իրավասությունների շրջանակներում
առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրոնյան

Ընթացակարգերի բաժին, Ս. Մաթևոսյան

հեռ. 011 800 312

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 26-ի N 07/80-2/36948-15 ու նոյեմբերի
23-ի N 06/3-3/36349-15 եզրակացությունները, որոշում է:

1. Սահմանել, որ Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի
(WWF-Armenia) կողմից կնքված՝ ստորև նշված գործարքներն անմիջականորեն կապված են
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի «Հարավային Կովկասի (Հայաստան)
էկոլոգիական միջանցքներում կենսաբազմազանության պահպանության համայնքային
մոդելների ստեղծում» ծրագրի մասին» N Մ-930-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետու-
թյան կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015
թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1223-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի
իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԱՍԴ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01524161) 2015 թվականի նոյեմբերի 9-ին կնքված՝
N 03/15-BMZ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ՀՀ Սյունիքի մարզի
Տաթև համայնքում գտնվող «Սատանի կամուրջ» բնության հուշարձանի գլխավոր հատա-
կազմի հայեցակարգի, հուշարձանի պատշաճ կերպով պահպանման և օգտագործման
մշակման ծառայությունների մատուցում՝ 4,326,910 դրամի չափով, առանց ավելացված
արժեքի հարկի:

2) «Կարկոմավտո» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00059627) 2015 թվականի նոյեմբերի 17-ին
կնքված՝ N 15/15-BMZ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «ՌԻԱՀ
23632-148» մակնիշի մեկ ավտոմեքենայի գնում՝ 7,300,000 դրամի չափով, առանց
ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն:

N 034/36143-15
18.11.15թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱԴԱՐԱՆ

15/10.7

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

26.11.15 № 07/802/36948-15

Ձեր № _____

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ի պատասխան Ձեր 19.11.2015թ. N 15/15.4/19762-15 գրության՝ կապված ՀՀ
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի N Մ-930-Ա որոշմամբ
հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին (Բնության համաշխարհային
հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ (WWF-Armenia))» որոշման նախագծի հետ,
հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և
առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանջուղազյան/

№ 034/37085-15
26.11.15թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 11) 800077

№ 06/3-3/36349-15

23.11.15թ 15/10.7

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 19.11.2015թ. N15/15.4/19762-15 գրությանը կից ներկայացված «Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի N Մ-930-Ա որոշմամբ հաստատված
ծրագրին հարակից գործարքների մասին (Բնության համաշխարհային հիմնադրամի
հայաստանյան մասնաճյուղ (WWF-Armenia)) որոշման նախագծի վերաբերյալ
հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների
շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Սիրոմյան

№ 034/36599-15
23.11.15թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

ՆԱԽԱԳԻԾ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ղեկտեմբերի 2015 թվականի N Մ- - Ա
քաղ. Երևան

15/10.8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N Մ-648-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԲԱՐԵԿԵԳՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 21-ի N 07/80-2/31642-15 և հոկտեմբերի 22-ի N 06/3-3/31685-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**:

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 26-ի «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարզառողջարարական համալիրի կառուցում» ծրագրի մասին (3-րդ փուլ)» N Մ-648-Ա (2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-744-Ա, օգոստոսի 28-ի N Մ-880-Ա, օգոստոսի 28-ի N Մ-888-Ա և հոկտեմբերի 23-ի N Մ-1135-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները:

1) 10-րդ կետի 4.4 ենթակետերում «2,500,000 դրամ» բառերը փոխարինել «7,500,000 դրամ» բառերով:

2) 10-րդ կետի 4.5 ենթակետերում «23,000,000 դրամ» բառերը փոխարինել «18,000,000 դրամ» բառերով:

2. Սահմանել, որ «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02706151) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սատրոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00068497) 2015 թվականի նոյտեմբերի 16-ին կնքված N 55 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ձայնակարգավորման աշխատանքների իրականացում՝ 7,560,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱԴԱՐԱՆ

15/10.8

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

24.11.15 № 04/80-2/

Ձեռ. № 36618-15

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 19.11.2015թ. N 15/15.1/19738-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 26-ի N Մ-648-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու ու նույն ծրագրին հարակից գործարքի մասին («Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի հետ, հայտնում եմ, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանցուղազյան/

Կառավարող՝ Ն.Կարապետյան
հեռ. 011 910-437

034/36775-15



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Տ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

0010, Երևան, Մելիք-Աղայան փող. 1
Հեռ. (+374 10) 800077

06/3-3736573-15

24.11.15
15/10.8

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին:

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 19.11.2015թ. N15/15.1/19738-15 գրությանը կից ներկայացված «Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 26-ի NУ-648-Ա որոշմամբ հաստատված
ծրագրում փոփոխություններ կատարելու ու նույն ծրագրին հարակից գործարքի
մասին («Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի
վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների
շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.Սիրոյան

ԳԼՀՄ բաժին, Ն.Քեմանյան
011-800-329

06/3/36756-15

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

— նոյեմբերի 2015 թվականի N Մ —
քաղ. Երևան

-Ա

15/10.9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1220-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈԳՈՒՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2015 թվականի նոյեմբերի -ի N 07/80-2/-15 և նոյեմբերի -ի N 06/-/-15 եզրակացությունները,
որոշում է:

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Տաշիր»
բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեփանավանի նոր
մանկապարտեզի մասնաշենքի կառուցման» ծրագրի մասին» N Մ-1220-Ա որոշմամբ
(2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1198-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված
ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) ծրագրի 9-րդ կետում «կազմակերպչական ծախսեր – 6.000.000 դրամ» բառերը
փոխարինել «ավտոտրանսպորտային ծախսեր – 6.000.000 դրամ» բառերով:

2) ծրագրի 11-րդ կետում «Նախատեսվող կազմակերպչական ծախսերը կկազմեն
6.000.000 դրամ այդ թվում բեռները Երևանից – Ստեփանավան ավտոտրանսպորտային
միջոցներով տեղափոխելու ծախսերը:» բառերը փոխարինել «Կազմակերպչական ծախսեր
չեն նախատեսվում» բառերով:

2. Սահմանել, որ Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481)
կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն
կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար
ունի զգալի նշանակություն՝

«Ջի ընդ էյ Ինքորփորեյշն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01839901) 2015 թվականի նոյեմբերի
2-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տրավերտինե
սալիկների, աստիճանների, աստիճանատակերի և տումբաների ձեռքբե-րում՝ 4,832,600
դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

15/10.9

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

17.11.15թ. № 04/80-2/35408-15

Ձեր №

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 11.11.2015թ. N 15/15.6/19203-15 գրության՝ կապված ՀՀ
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1220-Ա որոշմամբ
հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տաշիր» բարեգործական
հիմնադրամ)» որոշման նախագծի հետ հայտնում ենք, որ որոշման նախագծով
ներկայացված գործարքի մասով առարկություն չունենք, սակայն առաջարկում ենք
ծրագրում կատարել փոփոխություններ՝ 11-րդ կետը համապատասխանեցնելով ՀՀ
բարեգործության մասին օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ ենթակետի պահանջներին:

Հարգանքով

Ատոմ Զանջուլազյան/

Կատարող՝ Ն. Կարապետյան
հեռ. 011 910-437

17.11.15թ.
№ 034/35944-15



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 11) 800077

13.11.15թ. 15/10.9
№ 06/3-3/35065-15

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 11.11.2015թ. N15/15.6/19203-15 գրությանը կից ներկայացված «Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1220-Ա որոշմամբ
հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տաշիր» բարեգործական
հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին
վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.Միրումյան

ԳՄՀՄ քաժին, Ն.Քծանյան
011-800-329

13.11.15թ.
№ 034/35727-15



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
20 դեկտեմբերի 2013 թվականի N Մ-1220-Ա
քաղ. երևան

**«ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ՍՏԵՓԱՆԱԿԱՆԻ ՆՈՐ ՄԱՆԿԱԴԱՐՏԵՁԻ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑ-
ՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբեր 16-ի N 3.1/3.8-1/19454-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի դեկտեմբեր 18-ի N 02/7663-13, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2013 թվականի դեկտեմբեր 18-ի N 05/14.2/7786-13, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբեր 18-ի N ՎԱ/3-8/15864-13 և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2013 թվականի դեկտեմբեր 13-ի N 101/104.3.2/6397-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 469,000,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Ստեփանավանի նոր մանկապարտեզի մասնաշենքի կառուցման» ծրագիրը (կցվում է):

2. «Տաշիր» բարեգործական հիմնադրամին՝


1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

ՆԱԽԱԳԱՀ


[Handwritten signature]

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



15/10.9

«Տաշիր» բարեգործական հիմնադրամ
Հոգաբարձուների խորհրդի կողմից
Հանձնարարություն թիվ 10:



Հիմնադրամի գրասենյակը գտնվում է Երևանի Կոմիտասի պող. 120-րդ համարի 2-րդ հարկում:

«Ստեփանավանի նոր մանկապարտեզի մասնաշենքի կառուցման»

Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	Ստեփանավանի նոր մանկապարտեզի մասնաշենքի կառուցման աշխատանքները՝ հաշվի առնելով ներկայումս գործող մանկապարտեզի շենքի հետագա շահագործման անհնարիությունը:
2.	Ծրագրի նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«Տաշիր» բարեգործական հիմնադրամ, (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ 07203481, հեռ. (+374-10) 54-53-05, էլ. փոստ a-varosyan@mail.ru)
4.	Ծրագրի կատարողը	«Տաշիր» բարեգործական հիմնադրամ, (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ 07203481, հեռ. (+374-10) 54-53-05, էլ. փոստ a-varosyan@mail.ru)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, քաղ. Ստեփանավան, կրթության բնագավառ:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է՝ 469 000 000 դրամ:
7.	Բարեգործության ստացողը	Ստեփանավանի քաղաքային հանայնքը՝ շինությունն անհատույց հանձնվելու է համայնքին:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2013 թվականի դեկտեմբերի 02-ից – 2014 թվականի դեկտեմբերի 01-ը



2

9.	Միջոցառման նպատակը, նպատակները և ժամկետները, միջոցառման ֆինանսավորման աղբյուրները	1. հողային աշխատանքներ (մինչև 2014 թվականի մարտի 30-ը) - 2 100 000 դրամ, 2. երկաթբետոնե հիմնակմախքի և պատերի կառուցում (մինչև 2014 թվականի հունիսի 30-ը) - 215 000 000 դրամ՝ այդ թվում - բեռոն - 1580 մ³, 66 360 000 դրամ, - ամրան - 140 տնեմ, 61 600 000 դրամ, - տախտակ - 29 մ³, 4 490 000 դրամ, - պնդաբեռոնի բլոկ - 110 մ³, 1 740 000 դրամ 3. ինժեներական ենթակառուցվածքների կառուցում (մինչև 2014 թվականի նոյիսի 31-ը) - 86 400 000 դրամ, 4. տանիքի ջրամեկուսացում՝ (մինչև 2013 թվականի օգոստոսի 31-ը) - 25 500 000 դրամ, 5. արտաքին երեսպատման և ներքին հարդարման աշխատանքներ՝ (մինչև 2014 թվականի սեպտեմբերի 30-ը) - 108 000 000 դրամ, 6. տարածքի բարեկարգում և կառուցապատման այլ աշխատանքներ՝ (մինչև 2014 թվականի դեկտեմբերի 01-ը) - 21 000 000 դրամ, 7. նախագծային ծախսեր - 5 000 000 դրամ, 8. կազմակերպչական ծախսեր - 6 000 000 դրամ Ավելավում է շինարարական նյութերի, սարքավորումների, ապրանքների ներմուծման և Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռք բերման դիմաց հարկային արտոնություններ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) արժեքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ավելավում է շինարարական նյութերի, սարքավորումների, ապրանքների ներմուծման և Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռք բերման դիմաց հարկային արտոնություններ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Նախատեսվող կազմակերպչական ծախսերը կկազմեն 6 000 000 դրամ՝ այդ թվում բռնեղը Երևանից - Ստեփանավան ավտոարանադրուային միջոցներով տեղափոխելու ծախսերը :
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Լոռու մարզպետարան, Ստեփանավանի քաղաքապետարան
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև տեղեկատվություն կներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ծրագրի ընթացքի և ավարտի վերաբերյալ:

2. 16/11

2. 16/11

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1220-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու ու նույն ծրագրին հարակից գործարքի մասին («Տաշիր» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության դիտողության և առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1220-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տաշիր» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի հետ կապված հայտնում ենք, որ որոշման նախագծով ներկայացված գործարքի մասով առարկություն չունենք, սակայն առաջարկում ենք ծրագրում կատարել փոփոխություններ՝ 11-րդ կետը համապատասխանեցնելով ՀՀ բարեգործության մասին օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ ենթակետի պահանջներին:	Առաջարկությունը ընդունվել է: Որոշման նախագիծը լրացվել է նոր կետով, որով նախատեսվում են համապատասխան փոփոխությունները:

15/10.9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

նոյեմբերի 2015 թվականի N Մ- -Ա
քաղ. երևան

15/10.10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N Մ-1310-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Մայրի» հասարակական կազմակերպություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2015 թվականի նոյեմբերի -ի N 07/80-Չ/15 և նոյեմբերի -ի N 06/3-Յ/15 եզրակացու-թյունները,
ինչպես նաև հաշվի առնելով Մայրի հասարակական կազմակերպության 2015 թվականի նոյեմբերի
9-ի գրությունը, որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի «Մայրի» հասարակա-
կան կազմակերպության կողմից իրականացվող «Մոցիալական ինտեգրման կենտրոնի
ստեղծում» ծրագրի մասին» N Մ-1310-Ա (2014 թվականի մարտի 14-ի Մ-197-Ա, 2014
թվականի հոկտեմբերի 3-ի N Մ-999-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-122-Ա և
մարտի 18-ի N Մ-263-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագիրը
կարդալ հետևյալ նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Մայրի» հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝
02594556) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն
անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման
հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

«ՏՈՐ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02526227) 2015 թվականի նոյեմբերի 6-ին կնքված՝
պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գազի կաթսայի ձեռք բերում՝
844,451 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն:

Աղցիայական ինտեգրման կենտրոնի ստեղծում

ԾՌԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է հատուկ կարիքներով երեխաների և երիտասարդների ինտեգրումը հասարակության մեջ: Ծրագիրը ուղղված է՝ 1.Բացահայտելու հատուկ կարիքներով երեխաների և երիտասարդների անհատական օժտվածությունները և հնարավորությունները: 2.Ապահովելու երեխաներին և երիտասարդներին օրական ութ ժամ կենսաստարածքով, 3.Ապահովելու երեխաներին և երիտասարդներին հասակակիցների հետ շփման հնարավորություն մշակութային համատեղ նախագծերին մասնակցելու միջոցով: 4.Ժամանակի ընթացքում փոխելու հասարակության մեջ արմատավորված կարծիքը հատուկ կարիքներով երեխաների և երիտասարդների վերաբերյալ և հռչակելու ուշադրությունը նրանց կարիքներին: Ամկայում ենք ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից (այսուհետ՝ հարկային արտոնություններ)
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	
3.	Բարեգործը	15/10.10
4.	Ծրագիրը կատարողը	

5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Սկզբնական շրջանում՝ ք. Երևան, հետագայում՝ նաև ՀՀ մարզեր:
6.	Ծրագրի բյուջեն	Բնագավառը՝ սոցիալական 35,141,000.00 (երեսունհինգ միլիոն հարյուր քառասունմեկ հազար) ՀՀ դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Ցանկացած անտրոշմամբ վեցից երեսունհինգ տարեկան հատուկ կարիքներով երեխաներ և երիտասարդներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	10 տարի (2014թ. հունվարի 1-ից – 2024թ-ի հունվարի մեկ)
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Երևան, Շենգավիթի շրջան, Եղբայրության 11 հասցեում գտնվող շինությունում 6 արհեստանոցների ներքին հարդարում, կահավորում, սարքավորումներով ապահովում: 1. Ներքին հարդարման աշխատանքներ պահանջվող գումարն է 1,500,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ: Ներքին հարդարման աշխատանքները նախատեսվում է, որ կավարտվեն 2014թ-ի ընթացքում 2. Կահավորում: Կահավորման համար անհրաժեշտ գումարն է 6,800,000.00 (վեց միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ: Կահավորման աշխատանքները նախատեսվում է, որ կավարտվեն մինչև 2015 թվականի հոկտեմբեր ամիս: 3. Արհեստանոցները սարքավորումներով և նյութերով ապահովման համար անհրաժեշտ գումարն է 4,798,000.00 (չորս միլիոն յոթ հարյուր ինսունույթ հազար) ՀՀ դրամ: 4. Էլեկտրաէներգիայի ծախս 6,000,000.00 (վեց միլիոն) ՀՀ դրամ: 5. «Այնքան» ՓԲԸ համրային էլեկտրոնային հաղորդակցության գծով ծախս և հեռախոսակապի ծառայությունների գծով ծախս 1,200,000 (Մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, 6. Գազաֆիկացում, սպասարկում 1,594,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր ինսունչորս հազար) ՀՀ դրամ 7. ՄՈՍ Սիսթեմս՝ ՄՊԸ անվտանգության համակարգի տեղակայում՝ 908,000 (Ինը հարյուր ութ հազար) ՀՀ դրամ: 8. Մինիբուսի ձեռքբերում 2,256,000 (Երկու միլիոն երկու հարյուր հիսունվեց հազար) ՀՀ դրամ: 9. Արձիմիստրաոցիայի սենյակի համար կահույք և տեխնիկական սարքավորում՝ 1,500,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ* *(Այս ծախսը ներառված է նաև ծրագրի 11-րդ կետում): 10. Գազի սպառման հետ կապված ծախս 7,745,000.00 (յոթ միլիոն յոթ հարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամ, 11. Ջրի սպառման ծախս 840,000 (ութ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ:

10. Չեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը

3

1. Ներքին հարդարման աշխատանքներ 1,500,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:
2. Խոհանոցի համար կահույք 1,500,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, որը ձեռք է բերվելու ՀՀ-ից:
(Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)
3. Չեռազործ աշխատանքների արհեստանոցի կահույք 1,300,000.00 (մեկ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ, որը ձեռք է բերվելու ՀՀ-ից:
(Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)
4. Նկարչական արհեստանոցի համար կահույք 1,300,000.00 (մեկ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ, որը ձեռք է բերվելու ՀՀ-ից:
(Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)
5. Խնցեզործության արհեստանոցի համար կահույք, 1,200,000.00 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, որը ձեռք է բերվելու ՀՀ-ից:
(Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)
6. Փայտամշակման արհեստանոցի կահույք և կահույքի հուսք 1,500,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, որը ձեռք է բերվելու ՀՀ-ից:
(Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից):
7. Խոհանոցի համար էլեկտրական սարքավորումներ, սպասք, տնտեսական ապրանքներ 2,000,000.00 (երկու միլիոն) ՀՀ դրամ, որը ձեռք է բերվելու ՀՀ-ից:
(Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)
